II

ԱՂԹԱՄԱՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՇՈՒՐՋ

ՎՐԵԺ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Անվավեր մի գրվածքում ասվում է, որ իբր ԳՃՀ (921) թվականին Հայոց կաթողիկոս Գեորգ Բ Գառնեցին այցելել է Վասպուրականի Գագիկ Արծրունի թագավորին, որպեսզի մասնակցի Աղթամարի Ս. Խաչ վանքի կառուցումն ավարտելու առթիվ կատարվող նավակատիքին: Ապա կաթողիկոսը Վանա լճի ոլորտի բոլոր շրջանների հոգևոր առաջնորդ («կաթողիկոս») է օծել Եղիշեին[1]: Սակայն վերջինս որևէ այլ աղբյուրում չի հիշատակվում: Վավերական չէ, անշուշտ, Գագիկ Արծրունի թագավորին (908–943) դիտել որպես Գեորգ Բ-ի ժամանակակից, քանի որ վերջինս գահակալել է ավելի վաղ և վախճանվել է 897 թ., իմա՝ Աղթամարի Ս. Խաչ վանքի կառուցումից մոտ երկու տասնամյակ և Գագիկ Արծրունու թագավորելուց ավելի քան տասը տարի առաջ:

Անշուշտ, Վասպուրական աշխարհը թե՛ նախարարական պետականության (իշխանության) և թե՛ թագավորության ժամանակներում ուներ նաև իր հոգևոր իշխանությունն ի դեմս եպիսկոպոսի (կամ արքեպիսկոպոսի), որին ձեռնադրում էր Հայոց կաթողիկոսը: Հասկանալի է վերը նշված աշխատության հեղինակի միտումը՝ Աղթամարում կաթողիկոսության հիմնադրումը շաղկապել Վասպուրականի թագավորության հետ և այդ հիմամբ օրինական համարել 1113 թ. Աղթամարում առանձին կաթողիկոսության հիմնումը:

1021 թ. Վասպուրականի թագավորության գավառները կցվեցին Բյուզանդիային: Երկրից դուրս հանվեց ռազմիկ տարրը՝ ազնվականությունը: Սակայն բնակիչները մնացին հայրենի եզերքում: Նրանց չլքեց հոգևոր դասը՝ իր իշխանությունը պահպանելով Վասպուրականի, Մոկքի, Սասունի և հարակից մի քանի գավառների վանքերում ու եկեղեցիներում, որոնք չդրվեցին բյուզանդական եկեղեցու իրավասության տակ[2]: Թեև կայսրության եկեղեցին փորձեց դավանափոխել Վասպուրականի և հարակից գավառների հայ բնակչությանը՝ այնտեղ հիմնելով քաղկեդոնական եպիսկոպոսություններ, սակայն հայ հոգևորականությունը տեղի չտվեց և մնաց հավատարիմ նախնյաց դավանությանը:

---

[1] *Տե՛ս Մ. Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. № 5467, թ. 29ա: Տե՛ս նաև Մ. Մ ա ք ս ո ւ դ ե ա ն ց. Հաւաքարան անուանց կաթողիկոսաց Աղթամարայ, Ս. Էջմիածին, 1916, էջ 44:*

[2] *Տե՛ս Մ ա տ թ է ո ս Ո ւ ռ հ ա յ ե ց ի. Ժամանակագրութիւն (այսուհետև՝ Մ ա տ թ է ո ս Ո ւ ռ հ ա յ ե ց ի), Վաղարշապատ, 1898, էջ 49, Անանուն ժամանակագրութիւն, Երևան, 1940, էջ 16, Յուցակ հայ ձեռագրաց Մատենադարանի. Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց Յ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 100:*

Համաձայն Թովմա Արծրունու և նրա անանուն շարունակողի երկերին կցված հավելյալ գլխի հաղորդման՝ Վասպուրականի թագավորության վերացումից (1021 թ.) հետո հայրենիքում մնացած Արծրունիների շառավիղները Խեդենեկի գլխավորությամբ շարունակել են իշխել Ամյուկ ամրոցում, Աղթամար կղզում և Վանա լճի հանդիպակաց ափի գյուղերում: Խեդենեկը հիշվում է որպես «մեծ իշխան», Սենեքերիմ Արծրունի թագավորի տոհմակից և «թագաւորազն ցեղիցն Արծրունեաց»[3]: Նրա որդի Թոռնիկ իշխանը բնութագրվում է որպես «այր հզօր և պատերազմող և քաջ ի գործ արութեան»[4]:

Արծրունիների հետնորդները պահպանում են իրենց իշխանությունը նաև Թոռնիկի որդի Թադեոսի օրոք, որը XI դ. կեսից ժառանգում է հոր իշխանությունը և այն պաշտպանում շրջակա ցեղերի հարձակումներից: Նա և յուրայինները «քաջութեամբն իւրեանց ոչ տային թոյլ ական հատանել յարաժամ յարձակման թշնամեաց ի գաւառացն իւրեանց»[5],– վկայում է նույն մատենագիրը: Արծրունիների իշխանությունը ճանաչեցին սելջուկ-թյուրքերը, որոնք փոխարենը նրանցից հարկեր էին կորզում: Վասպուրականը, Մոկքը հաճախ ենթարկվում էին օտար ցեղերի հարձակումներին, որոնցից մեկի ժամանակ Մոկաց Ատիճանս գյուղում նահատակվում է Թադեոսի զավակը՝ Թոռնիկը: Վերջինիս որդի Աբղլմսեհը կարողանում է կարգավորել հարաբերությունները սելջուկ-թյուրքական իշխանությունների հետ: Նա, ինչպես հավաստում է նույն հեղինակը, «ընդ ամենայն ումեք զիսաղաղութիւն հնարէր, զի տայր ի պէտս հարկացն զկեանս և զստացուածս իւր, և ոչ դատէր առնուլ ինչ ի պէտս հարկապահանջողաց… վարէր զիշխանութիւնն իւր, և ոչ ահիւ և սպառնալեօք»[6]:

Արծրունիների շառավիղները պահպանեցին նաև իրենց հոգևոր իշխանությունը՝ աթոռանիստ ունենալով Աղթամարի Ս. Խաչ վանքը: Այնտեղ կրթություն ստացավ Աբղլմսեհի որդիներից Դավիթը, հետագայում Աղթամարի ինքնահռչակ կաթողիկոսը, որը մանկուց կրեց «զլուծ խոնարհութեան՝ պահօք և աղօթիւք և խստամբեր ճգնութեամբ, արի և քաջ ժուժկալութեամբ… առ ոչինչ համարելով զաշխարհս և զփառս սորա և զվայելչութիւն կենցաղոյս…»[7]: Ըստ նույն աղբյուրի՝ Դավիթը մինչև կաթողիկոս հռչակվելը վարում էր եպիսկոպոսի, արքեպիսկոպոսի պաշտոնները, նաև Աղթամար կղզու դիմացի գյուղերի նկատմամբ Արծրունիների հոգևոր իշխանությունը: Նրա եղբայրը՝ Ստեփանոսը (Ալուզ կրկնանունով) մինչև կաթողիկոս օծվելը գլխավորում էր Արծրունիների աշխարհիկ իշխանությունը՝ հաստատվելով հորից ժառանգություն ստացած անառիկ Ամյուկ ամրոցում: Նա, հարկ տալով այլազգիներին, պահպանեց իշխանությունը՝ «զօր կարգելով հեծեալս և տալով նոցա ռոճիկս… և փայլէր ի մէջ տիեզերաց իւրով ա-

---

[3] *Թ ո վ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի և Ա ն ա ն ո ւ ն. Պատմութիւն Արծրունեաց տան (այսուհետև՝ Թ ո վ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի և Ա ն ա ն ո ւ ն), աշխ. Մ. Դարբինյան-Մելիքյանի, Երևան, 2006, էջ 341:*

[4] *Նույն տեղում:*

[5] *Նույն տեղում:*

[6] *Նույն տեղում, էջ 342:*

[7] *Նույն տեղում, էջ 342–343:*

զատագունդ հեծելովքն… զօրութեամբ անպարտելի…»[8], *– գրում է նրա ջատագով հիշատակագիրը:*

Ինչպես հայտնի է, Հայոց կաթողիկոսական աթոռը Բագրատունյաց թագավորության անկումից հետո մատնվել էր աստանդական կացության, հիմնականում հաստատվելով հայրենի բնաշխարհից դուրս, նախ՝ Ծամնդավ բերդաքաղաքում (Փոքր Հայքում), ապա՝ Մելիտենե քաղաքից ոչ հեռու գտնվող Մուտառասուն ավանում, փոքր-ինչ հետո՝ Սև լեռների (Ամանոսյան) Շուղր վանքում: Բայց այդտեղ էլ չգտնելով հուսալի հանգրվան, 1080-ական թվականներին, Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի օրոք՝ Մայր աթոռն ապաստանեց Գող Վասիլ իշխանի նստավայր Քեսուն քաղաքում[9]*:*

Ստեղծված պայմաններում սասանվում էր Հայոց ընդհանրական աթոռի դիրքն ու հեղինակությունը: Գրիգոր Վկայասերի հովվապետության ժամանակ կաթողիկոսներ հռչակվեցին Մարաշի մոտակա Հոնի քաղաքում, ապա Մարաշում, Տարսոնում:

Անիում կարճ ժամանակ կարողացավ կաթողիկոսական աթոռ հիմնել նաև 1081 թվից կաթողիկոսի տեղապահ կարգված Բարսեղը՝ Գրիգոր Վկայասերի քրոջ որդին: Հայոց արևելից կողմանքում կաթողիկոսական իշխանությամբ էր օժտված Արցախի և Ուտիքի հոգևոր առաջնորդը: Նշյալ կաթողիկոսություններում, ինչպես վկայում է Մատթեոս Ուռհայեցին, ինքնուրույն կերպով «առնէին ձեռնադրութիւնս և օծանէին եպիսկոպոսունս և տային օրհնութիւնս սուրբ ձիթոյն…»[10]*:*

Մեկուսացված էր մնում նաև Աղթամարի եպիսկոպոսական աթոռը, որը սակայն ուներ այն առավելությունը, որ գոյատևում էր հայրենիքում, հարազատ ժողովրդի մեջ՝ ինքնուրույն վարելով երկրամասի եկեղեցական գործերը: Հայոց ընդհանրական աթոռի հետ թույլ կապը Աղթամարի եկեղեցական հայրերին մղում էր ինքնուրույն գործառնության, որն առավել դրսևորում գտավ 1113 թվականին, երբ Հայոց կաթողիկոսական գահաթոռին բազմեց Գրիգոր Վկայասերի քրոջ որդի Գրիգոր Գ-ը՝ Ծովք դղյակի տեր Ապիրատի որդին, որն էր «տղայ հասակաւ՝ ԺԵ ամաց»[11]*: Պատեհ առիթից օգտվեց Աղթամարի արքեպիսկոպոս Դավիթը՝ Աբղլմսեհ Արծրունու որդին, որը պատրվակելով Գրիգոր Գ-ի դեռահաս տարիքը, նույն թվին իր կողմնակից հինգ եպիսկոպոսների կողմից Վան քաղաքից ոչ հեռու գտնվող Զորովանքում ձեռնադրվեց կաթողիկոս: Դավիթը հավակնում էր բազմել Հայոց ընդհանրական Աթոռին: Սկզբնապես նրա հոգևոր իշխանությունը ճանաչեցին ոչ միայն Վանա լճի ոլորտի եկեղեցիները, այլև Սյունյաց և Արտազի աթոռները: Բայց մեկ տարի հետո նրանք հնազանդվեցին Գրիգոր Գ - հայրապետին: Այդպիսով՝ Դավիթ Արծրունու հոգևոր իշխանությունը պահ-*

---

[8] *Նույն տեղում, էջ 347:*

[9] *Տե՛ս Ներսես Շնորհալի. Վիպասանութիւն, աշխ. Մ. Մկրտչյանի, Երևան, 1981, էջ 121–122:*

[10] *Մատթէոս Ուռհայեցի. էջ 229–230:*

[11] *Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց (այսուհետև՝ Սամուէլ Անեցի), աշխ. Ա. Տէր-Միքելեանի, Վաղարշապատ, 1893, էջ 124, տե՛ս նաև Սմբատայ Սպարապետի Տարեգիրք (այսուհետև՝ Սմբատ Սպարապետ), Վենետիկ, 1956, էջ 142:*

պանվեց սոսկ Վանա լճի շրջակայքում: Այդուամենայնիվ, նա չհրաժարվեց Հայոց կաթողիկոսի տիտղոսից: Նա և իր կողմնակիցներն Աղթամարը հռչակեցին հայրապետական աթոռ[12]:

Դավիթ Արծրունու ձեռնարկումը դատապարտվեց եկեղեցական մյուս կենտրոններում՝ դիտվելով իբրև ապստամբություն Հայոց ընդհանրական աթոռի դեմ: «Դաւիթ անուն ոմն եպիսկոպոս յաթոռն Աղթամարայ,– գրում է ժամանակակից մատենագիրը,– արհամարհէ զտղայութիւն Գրիգորիսի և ապստամբեալ նստի կաթուղիկոս՝ հաւանեցուցեալ ինքնեան և զաթոռն Սիւնեաց և զԹադէոսի առաքելոյն՝ տարի մի, և յետոյ դարձան նոքա ի հնազանդութիւն մեծ աթոռոյն. և Աղթամար մնաց յիւրում ապստամբութիւն»[13]:

Դավիթ Արծրունու կաթողիկոսական իշխանության հիմքերն ամրապնդվելուն էր նպատակաուղղված Զորովանքում ձեռնադրվելը: Նա և իր հետևորդները իրենց ձեռնարկումը արդարացնում էին նրանով, որ այդ վանքում էին Գրիգոր Լուսավորչի պատարագի սեղանը, գավազանը, մաշկեղեն գոտին, Հռիփսիմե կույսի հողաթափը և դաստառակը (շղարշը), նաև արյունոտ պարեգոտը: Այդ սրբությունները «ի ժամանակս հալածանացն» պահվեցին «ի կղզին Աղթամարայ»[14]: Զորովանքը հռչակված էր նաև նրանով, որ Դվինի 893 թ. ավերիչ երկրաշարժից հետո կաթողիկոսարանն ավերվել էր, և Գեորգ Գառնեցի կաթողիկոսը, որ հարկադրված հանգրվանել էր Վանում, 897 թ. վախճանվեց ու թաղվեց Զորովանքում[15]: Իր կյանքի վերջալույսին Վասպուրականում ապաստանեց նաև Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսը՝ հաստատվելով Աղթամարի Ս. Խաչ վանքում: Նրանից հետո Աղթամարում գահակալեցին Ստեփանոս Բ Ռշտունի, Թադեոս Ա Ռշտունի և Եղիշե Բ Ռշտունի կաթողիկոսները: Որոշ ժամանակ կաթողիկոսական գահը Աղթամարում էր նաև Անանիա Մոկացի կաթողիկոսի (946–968 թթ.) օրոք, որը հաշվի առնելով Աղթամարի մեկուսացվածությունը, 948 թ. իր աթոռը տեղափոխեց Անի մայրաքաղաքից ոչ հեռու գտնվող Արգինա ավան: 968 թ. Աղթամարում ապաստանեց Վահան կաթողիկոսը[16]:

Աղթամարում Հայոց կաթողիկոսների աթոռակալելը, անշուշտ, պայմանավորված էր Վասպուրականում Արծրունիների թագավորության առկայությամբ: Կաթողիկոսները թագավորների հովանու ներքո վայելում էին անհրաժեշտ անդորրը: Մինչդեռ այլ էր իրավիճակը Դավիթ Աղթամարցի կաթողիոսի օրոք: Վասպուրականը ենթակա էր օտար ցեղախմբերի գերիշխանությանը: Անհրաժեշտ էր ամրապնդել Վանա լճին հարող տարածքում դեռևս պահպանվող Արծրունի տոհմի շառավիղների կիսանկախ փոքրածիր իշխանությունը: Հայրենիքից հեռու ընկած, մշտական հանգրվանից զուրկ Հայոց կաթողիկոսությունը

---

[12] *Հաւաքումն Պատմութեան Վարդանայ Վարդապետի (այսուհետև՝ Վարդան Վարդապետ), Վենետիկ, 1862, էջ 116:*

[13] *Սամուէլ Անեցի, էջ 124:*

[14] *Վարդան Վարդապետ, էջ 116: Տե՛ս նաև Թովմա Արծրունի և Անանուն, էջ 73:*

[15] *Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 181:*

[16] *Տե՛ս Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, III, Ը, էջ 181–182:*

որևէ հույս չէր ներշնչում Հայ բնաշխարհում անկախության վերականգնման համար: Դա իրեն զգալ էր տալիս նաև ընդհանրական աթոռին ենթակա վիճակների տարանջատվածությամբ: «Ի բազումս բաժանեցաւ կաթողիկոսութիւնն Հայոց՝ տէր Գրիգորիսն, որ և Վահրամ, յԵգիպտոս, և Գէորգ ի կողմանս Արևմտից, և միւս ոմն ի Վասպուրական՝ ի կղզւոջն Աղթամար, և տէր Բարսեղ յաշխարհիս Հայոց…»[17],– նշում է Կիրակոս պատմագիրը:

Ստեղծված պայմաններում Գրիգոր Վկայասերին հաջորդած Բարսեղ Պահլավունին կաթողիկոսական աթոռը, ինչպես արդեն ասվեց, տեղափոխեց հայրենի եզերք՝ Անի քաղաք, որտեղ և նա ձեռնադրվեց Հայոց կաթողիկոս: Սակայն Անին ենթակա էր օտար տիրապետության, ուստի փոքր-ինչ հետո Բարսեղը ստիպված էր իր աթոռը տեղափոխել Գող Վասիլի իշխանության կենտրոն Քեսուն քաղաքին մերձ Կարմիր վանք[18]: Հայոց բնաշխարհում կային եկեղեցական մի քանի կենտրոններ, որոնցից միայն Անին կարող էր հավակնել Մայր աթոռանիստ դառնալու պատվին: Սակայն այդ հռչակավոր քաղաքը ենթակա էր Շադդադյան ամիրաներին, որոնք նույնիսկ Անիի Մայր տաճարը վերածել էին մզկիթի[19] և զրկել նախկինի պես կաթողիկոսանիստ դառնալու հնարավորությունից: Մինչդեռ Աղթամարն իր անմատչելի դիրքով պահպանեց իր անկախությունը՝ շնորհիվ Արծրունիների հետնորդների դեռ հարատևող իշխանության: Անշուշտ, վերջինիս հիմքերի ամրացման համար կարևոր էր նաև հեղինակավոր եկեղեցական իշխանության գոյությունը: Աղթամարը Հայոց ընդհանրական աթոռ հռչակելն ինքնին ընձեռում էր հնարավորություններ Արծրունիների այդ փոքրիկ իշխանության պահպանման ու հեղինակության ընդլայնման համար: Վանա լճի ոլորտի հայկական աշխարհիկ և հոգևոր իշխանությունների առկայությամբ գոյատևման հուսալի երաշխիքներ էր ստեղծվում տեղի հայ բնակչության համար, նպաստում ազգապահպանման գործընթացներին: Ընդ որում, Դավիթ Արծրունին դիտվում էր որպես Գրիգոր Լուսավորչի տոհմի ավանդների ժառանգորդն ու իրականացնողը: Անանուն հիշատակագիրը նշում է, որ «նստոյց զնա (Դավթին – Վ. Վ.) Տէր յաթոռ մերոյ սուրբ Լուսաւորչին սրբոյն Գրիգորի և խառնեաց զնա ի կարգ սուրբ հարցն առաջնոց, սրբոցն Ռստակիսի, Վրթանիսի, Յուսկանն և Գրիգորիսի, Ներսիսի և Սահակայ…»[20]: Ավելին՝ Դավիթ Աղթամարցի Արծրունին համարվում էր նաև Վասպուրականի թագավորների հոգևոր ժառանգորդը: Նա իր աթոռը կաթողիկոսություն հռչակելը հիմնավորում էր նրանով, որ «Աթոռ է եւ այս թագաւորացն Արծրունեաց, վայել է լինել եւ պատրիարգութեան»[21]: Աղթամարի կաթողիկոսությունը տեղացիները դիտում էին որպես «զաթոռ հայրապետական և զթագաւորական մերոյ ազին»[22]:

---

[17] *Կիրակոս Գանձակեցի. Պատմություն Հայոց, աշխ. Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 100:*

[18] *Տէ՛ս Ներսես Շնորհալի. Բանք չափաւ, Վենետիկ, 1928, էջ 596–597:*

[19] *Տէ՛ս Վարդան Վարդապետ, էջ 119:*

[20] *Թոմա Արծրունի և Անանուն, էջ 344:*

[21] *Վարդան Վարդապետ, էջ 116:*

[22] *Ղ. Փիրղալէմեան. Նստարք Հայոց, Կ. Պոլիս, 1888, էջ 97:*

Բայց համերկրային հայրապետի պատվատիտղոսի հավակնորդ Դավիթ Խեդենեկյանը դեռ պետք է ճանաչում գտներ հայ հոգևորականության, հատկապես արևելահայերի միջավայրում: Ինչպես նշվեց, Դավիթը քայլեր ձեռնարկեց այդ ուղղությամբ, բայց չկարողացավ հասնել ցանկալի հաջողության և ձեռք բերեց Հայոց ընդհանրական աթոռի դեմ ծառացողի, ապստամբի համբավ: Նկատենք, որ Գրիգոր Գ հայրապետը համարվում էր «ըստ մարմնոյ ազգէ սուրբ Լուսաւորչի», և այն հոգևոր այրը, որ «հակառակ եղև կաթողիկոսաց մեծի, հակառակ է Սուրբ Լուսավորչին և ամենայն հայրապետաց և առաքելացն Քրիստոսի»[23]: Ինքը՝ Գրիգոր Գ կաթողիկոսը դեռևս 1101 թ. իրեն անվանում է «ըստ աշխարհի պարթև… ազգէ Արշակունի», որը բազմել է «ի բնիկ աթոռն հայրապետութեան նախնեաց իմոց»[24]: Թե՛ Հայաստանում և թե՛ կիլիկյան բարձունքներում, անշուշտ, հաշվի էին առնում այդ իրողությունը: Ժամանակակից մի գրիչ նշում է, որ «ապստամբեալ տէր Դաւիթ եպիսկոպոս ոմն աղթամարցի և նստաւ իւրովի կաթողիկոս յԱղթամար, և զբազումս հաւանացուցեալ իւրն…»[25]:

Սակայն Դավիթ Աղթամարցու կաթողիկոսությունը մերժվեց նաև արևելահայ հոգևորականության կողմից: Արմատական դիրքորոշում ցուցաբերվեց «մանաւանդ ի յԱնւոյ գլխաւորացն. որոց գրէ մեծ շնորհակալութիւն օրհնութեամբ պատրիարգն Գրիգորիս ամենայն վանորէիւք Սեաւ լերինն, և շրջակայ եպիսկոպոսացն ձեռագրով»[26],– վկայում է Վարդան պատմիչը:

Ըստ երևույթին, արևելահայ եպիսկոպոսներն անմիջապես չեն արձագանքել Աղթամարում հակաթոռ կաթողիկոսության ստեղծմանը: Մինչև արևելահայ եկեղեցականների դիրքորոշումը պարզելը, Գրիգոր Գ-ը և իր կողմնակիցները Աղթամարում կաթողիկոսություն հռչակելու հաջորդ տարում 1114 թ. Սև լեռան Կարմիր վանքում ժողով են գումարում: Ժողովի մասնակից հոգևորականները (որոնց թիվը հասցվում է 2500-ի[27], նույնիսկ 3000-ի[28]) կտրուկ մերժեցին Աղթամարի ինքնահռչակ կաթողիկոսությունը՝ նզովելով Դավիթ կաթողիկոսին ու նրա հետևորդներին: «Ի սուրբ լեառնն՝ մեծաւ Սիւնհոդոսիւ,– գրում է Ներսես Շնորհալին,– սուրբ և առաքինեաց արանց ազգիս Հայոց՝ ժողովով աւելի քան զերկու հազար և հինգ հարիւր անձանց եպիսկոպոսաց, վարդապետաց, հարց վանականաց և միանձանց սրբոյ լերինն, նզովեալ հերքեցան յեկեղեցւոյ Քրիստոսի, և սրով բանին Աստուծոյ հատեալ՝ ի բաց ընկեցան որպէս զնեխեալ և

---

[23] *ՄՄ, ձեռ. 4669, թ. 191 ա:*

[24] *Ղ. Փ ի ր ղ ա լ է մ ե ա ն. Նշխարք պատմութեան Հայոց, Բ հատոր (ՄՄ, ձեռ. 4515, էջ 5):*

[25] *Գ. Հ ո վ ս ե փ յ ա ն. Հիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 306: Ըստ Հայսմավուրքի, Բջնիի աթոռը ևս ընդունել է Դավիթի կաթողիկոսական իշխանությունը (տե՛ս Ն. Ա կ ի ն ե ա ն. Գաւազանա- գիրք կաթողիկոսաց Աղթամարայ, Վիեննա, 1920, էջ 10–11): Ավելին, ըստ 1173 թվակիր հիշատակարանի, Դավիթ Աղթամարցու կաթողիկոսությունն «ընկալան և հնազանդեցան նմա իշխանքն և ամենայն արքեպիսկոպոսունքն արևելից և աթոռակալքն Թադէոսի առաքելոյն եւ Տաթեւուն, Բջնուն և Հաղբատուն: Սոքա միաբանեցան տէր Դաւթին Աղթամարայ, որ էր թագաւորազն…» (Գ. Հ ո վ ս ե փ յ ա ն. նշվ. աշխ., հ. Ա, էջ 421–422):*

[26] *Վ ա ր դ ա ն Վ ա ր դ ա պ ե տ, էջ 116:*

[27] *Տե՛ս Ն ե ր ս ե ս Շ ն ո ր հ ա լ ի. Թուղթ ընդհանրական, աշխ. Է. Բաղդասարյանի, Երևան, 1995, էջ 116:*

[28] *Տե՛ս Գ. Հ ո վ ս ե փ յ ա ն. նշվ. աշխ., հ. Ա, էջ 422:*

զփտեալ անդամ յառողջ մարմնոյ եկեղեցւոյ՝ անէծս ցաւագինս կուտեալ ի գլուխ նոցա…»[29]*:*

Նզովքին ենթակա էին «զկաթողիկոսն Ախթամարայ զտէր Դաւիթ եպիսկոպոսօք և վարդապետօքն ամենայն քահանայօք և սարկաւագօք ամենայն կենդանիք…»[30]*:*

Ժողովականները գրավոր իրազեկում են արևելահայ եկեղեցականներին իրենց որոշման մասին՝ նշելով նաև, որ Գրիգոր Գ կաթողիկոսի դեռահաս տարիքը չի կարող խոչընդոտել նրա հովվապետությանը: Շեշտվում էր նաև այն փաստը, որ Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիսը նույնպես «մանուկ էր ԺԵ ամաց, զոր ձեռնադրեաց սուրբն Գրիգոր…»[31]*: Ապա, ինչպես նշվում է նույն գրչի կողմից, ժողովի որոշմանը իրազեկ դառնալուց հետո արևելից աթոռականներն ու իշխանները հնազանդվում են Գրիգոր Գ կաթողիկոսին: Իսկ հաջորդ՝ 1115 թ. հաջողվում է Աղթամարից գողանալ Գրիգոր Լուսավորչի Աջն ու քողը և տեղափոխել Ծովք դղյակ՝ Գրիգոր Գ հայրապետի նստավայր*[32]*:*

Ենթադրվում է, որ Սև լեռան ժողովում կանոն է սահմանվել, որով հայոց կաթողիկոսի ընտրությունը պետք է կատարվեր Մեծ Հայքի չորս գլխավոր աթոռների՝ Բջնիի, Հաղբատի, Արտազի և Տաթևի արքեպիսկոպոսների հավանությամբ, այլապես ընտրությունը պետք է անվավեր համարվեր[33]*: Ցավոք, չեն պահպանվել ժողովի սահմանած կանոնական որոշումները, ուստի նշյալ ենթադրության հետ դժվար է համաձայնվել:*

Ինչևէ, Աղթամարի Դավիթ կաթողիկոսը տեղի չտվեց այդ ժողովի որոշման առջև՝ շարունակելով իրեն համարել «Հայոց կաթողիկոս»: Սակայն դա միանշանակ չէր ընդունվում ժամանակակիցների կողմից: Ուշագրավ փաստ է, որ անգամ Վան քաղաքից մոտ 11 կմ հյուսիս-արևմուտքում գտնվող Մարմետ գյուղում 1118 թ. Հովհաննես գրչի ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում նշվում է, որ այն կատարել է «ի հայրապետութեանն տեառն Դաւթի Հա(յ(ոց կաթուղիկոսի ի Վասպու(ական(յորում կայր և այլ կաթուղիկոս ի ներքին երկրին, մերձ ի յԱնտիոք: Արդ, եթէ ո՞ր ճշմարիտ է կամ ո՞ր սուտ, զայն Աստուած գիտէ»[34]*: Բայց Հայոց ՇՀԲ (1123 թ.) օրինակված Ավետարանի հիշատակարանում ասվում է, որ այն կատարվել է «ի հայրապետութեան Դաւթի՝ Թոռնիկեան տեառն կաթողիկոսի Աղթամարայ»*[35]*:*

Ծանր ժամանակներ էին թե՛ Աղթամարի կաթողիկոսության և թե՛ Հայոց ընդհանրական աթոռի համար: Մարմետում 1118 թ. օրինակված վերոնշյալ ձեռագ-

---

[29] Ն ե ր ս ե ս Շ ն ո ր հ ա լ ի. Թուղթ ընդհանրական, էջ 116:

[30] ՄՄ, ձեռ. № 4669, թ. 202ա:

[31] Գ. Հ ո վ ս ե փ յ ա ն. նշվ. աշխ., հ. Ա, էջ 422:

[32] Նույն տեղում:

[33] Տե՛ս Մ. Չ ա մ չ ե ա ն ց. Պատմութիւն Հայոց, հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 37:

[34] Հայերեն ձեռագրերի հիշատակարանները Ե-ԺԲ դարեր, աշխ. Ա. Մաթևոսյանի, Երևան, 1988: Տե՛ս նաև Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Դ, կազմեցին Ա. Քյոշկերյան, Կ. Սուքիասյան, Յ. Քյոսեյան, Երևան, 2008, էջ 660:

[35] Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, կազմեց Ե. Լալայեան, Թիֆլիս, 1915, էջ 780–781: Տե՛ս նաև Գ. Հ ո վ ս ե փ յ ա ն. նշվ. աշխ., հ. Ա, էջ 332–333:

րի հիշատակարանում նշվում է, որ այդ թվականին տեղի են ունենում ասպատակություններ՝ «անաւրէն ազգի Իսմաելի, որ կոչի թուրքման և մականուն Խարամիք, ի գեղապանծ գաւառս Վասպուրականի, եւ ըստ վաղուց որջացեալ եւ հնացեալ կատաղութեանն իւրեանց, զոր ունին ի վերա խաչապաշտաց, նորոգեալ ի վերա Տոսպ գաւառիս, զբազումս անողորմաբար եւ առ ի պաշտաւն մատուցանել կոտորեցին... Զառաջիկայն չգիտեմք, թէ զինչ է լինելոց... եմք յանտանելի հարկապահանջութեան եւ յառի եւ յաւարի»[36]:

Օրհասի մատնված Վասպուրականի հայ բնակչությունը թեև ենթակա էր խիստ ծանր հարկահանության, բայց գոնե այդ գնով կարողանում էր գոյատևել, պահպանել իր կրոնն ու ազգային դիմագիծը, հոգևոր արժեքները: Դրանում, անշուշտ, մեծ էր Արծրունիների իշխանության, Աղթամարի կաթողիկոսության խաղացած դերը: Դավիթ կաթողիկոսի եղբայր Ստեփանոս Ալուզը կարողացավ կարգավորել հարաբերությունները օտար տիրակալների (թուրքմենների) հետ[37]:

Ավելի անմխիթարական էր Ամենայն Հայոց կաթողիկոսության վիճակը: Օտար ցեղերի հաճախակի հարձակումների պատճառով այն շարունակում էր մնալ վիատ ու անհաստատ վիճակում, մատնված աստանդական կացության: 1125 թ. Գրիգոր Գ կաթողիկոսը հարկադրված եղավ իր նստավայրը Քեսունից տեղափոխել Եդեսիայի կոմսությունից կախյալ Վասիլ Պահլավունու Ծովք դղյակ: Բայց այդտեղ էլ նա հանգիստ չգտավ: Ըստ Սմբատ Սպարապետի, թյուրքերի ահից Գրիգոր Գ-ը և իր դասակիցները «ի Ծովք բերդն իւրեանց երկնչէին դադարել»[38]:

Ստեղծված պայմաններում Աղթամարի կաթողիկոսությունն ստիպված էր շարունակել ինքնապաստան գործունեությունը հայրենիքում: 1114 թ. բանադրանքը մյուս հայ եկեղեցական կենտրոններին խստիվ արգելում էր որևէ շփում ունենալ Աղթամարի կաթողիկոսության հետ: Անշուշտ, նաև դա պատճառ դարձավ, որպեսզի ձեռագիր հիշատակարանների հեղինակ գրիչները հույժ ժլատ տեղեկություններ հայտնեն մոտ 40 տարի Աղթամարում գահակալած Դավիթ Արծրունու մասին: Աղթամարի կաթողիկոսության վրա շանթ ու կրակ տեղաց նաև 1166 թվականից Հայոց կաթողիկոսի պաշտոնն ստանձնած Ներսես Շնորհալին՝ բովանդակ հայությանն ուղղած իր շրջաբերական նամակում՝ «Թուղթ ընդհանրականում»: «Հանգոյն իժի և քարբի, խցեալ զլսելիս աստուածային բանին, դեռևս յամառեալ բորբոքին ի նոյն չարութեան, արբեալ և յիմարեալ փառամոլ ախտիւ, իբրև զգազան կատաղիս, ոչ դադարեն մուծանել զխռովութիւն յառագաստ խաղաղութեան երկնաւոր հարսնարանի՝ փեսայացեալ Բանին...»[39],– Աղթամարի հոգևոր հայրերի մասին նա այսպես է արտահայտվում:

---

[36] *Հայերեն ձեռագրերի հիշատակարանները, Ե-ԺԲ դարեր, էջ 153:*

[37] *Տե՛ս Թ ո վ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի և Ա ն ա ն ո ւ ն, էջ 347:*

[38] *Ս մ բ ա տ Ս պ ա ր ա պ ե տ, էջ 169:*

[39] *Ն ե ր ս ե ս Շ ն ո ր հ ա լ ի. Թուղթ ընդհանրական, էջ 117: Շնորհալին դատապարտում է նաև արծաթասիրության ախտով տառապող եպիսկոպոսներին և շահատենչ մյուս հոգևորականներին (նույն տեղում, էջ 82–83, 110–111):*

Դավիթ Արծրունու կաթողիկոսությունը խաղաղություն էր վայելում շնորհիվ նրա եղբոր՝ Ստեփանոս Ալուզի շրջահայեցության ու զինական կորովի: Վերջինս, ինչպես վկայում է անանուն հիշատակագիրը, ամրանալով լճափի Ամյուկ ամրոցում, կարողանում էր «ի դիմի ունել անօրէն ազգացն իսմայէլացւոց. և նա առաւելեալ իմաստութեամբ քան զամենայն զհարս իւր»[40]: Ստեփանոս Ալուզը ամրացրեց Ամյուկի պարիսպները, նորոգեց մյուս կառույցները, որոնք երկար տարիներ բարձիթողի վիճակում էին: Նա իմաստությամբ և «պէսպէս հնարիւք… հաշտեցուցանէր ընդ իւր զանհաշտ թշնամիսն զազգն Ելիմացւոց (թյուրքերի – Վ. Վ.). և ի նոցանէ առնոյր պարգևս և մեծութիւն և փառաւոր և երևելի լինէր յաչս անհաւատիցն իւրով բազմիմաստ գիտութեամբ»[41]:

Արծրունիների այդ փոքրիկ իշխանության, իհարկե, նաև Աղթամարի կաթողիկոսության գոյության շնորհիվ Վասպուրականի բնակչության մեջ պահպանվում էր հայրենի երկրի քաղաքական անկախության հույսը: Նույն աղբյուրի վկայությամբ այդ իշխանության մեջ էին հավաքվել Վասպուրականում դեռևս իրենց գոյությունը պահպանած ազատանու մնացորդները: Նրանցից Ստեփանոս Ալուզը ստեղծեց այրուձի՝ դժնդակ պայմաններում ինչ-որ չափով ապահովելով բնակչության ներքին ու արտաքին խաղաղությունը: Ստեփանոս Ալուզը, ինչպես վկայված է նույն աղբյուրում, եղավ «պատճառ շինութեան տանն Վասպուրականի… փախուցելոց պատսպարան… գերելոց գերեղարձ… գողոց և աւազակաց հերքիչ և ամենայն անօրէնութեան հալածիչ»[42]:

Մինչդեռ օրհասական պայմաններում շարունակում էր գոյատևել ընդհանրական Հայոց աթոռը Ծովքում, իսկ 1150 թվից՝ Եփրատի ափին, Ծովքից ոչ հեռու ընկած Հռոմկլա դղյակում: Ներսես Շնորհալին ցավով արձանագրում է հայ ժողովրդի տարասփռվածությունը և կաթողիկոսական աթոռի անել կացությունը: Հայերը, գրում է նա, ցրված են՝ «որք յարևելս ի սեփական աշխարհդ Հայաստանեայց բնակեալք, և որք յարևմտեան կողմանսդ սահեալք նժդեհութեամբ և որք ի միջերկրեայս ի մէջ այլալեզու ազանց տարաբերեալք, և որք յիւրաքանչիւր յեզերս աշխարհաց ըստ մեղաց մերոց ցրուեալք ի քաղաքս և ի դղեակս, ի հիւղս և յազարակս»[43]:

Այդպիսի պայմաններում Հռոմկլայի աթոռը զրկված էր ժողովրդի, հոգևոր կենտրոնների հետ անմիջական հաղորդակցությունից: «Եմք,– գրում է Շնորհալին,– իբրև զայծեամն յորսորդաց և ի շանց փախուցեալք՝ ի քարանձաւիս յայս բնակելով»[44]: Ավելին՝ Մայր աթոռը, ի տարբերություն Աղթամարի կաթողիկոսության, որը մեծ հասույթներ էր ստանում հանդիպակաց ափի գյուղերից, զրկված էր կենսամիջոցներից՝ «ի գիւղից, կամ յազարակաց, յորոց ունիմք և ոչ

---

[40] *Թ ո վ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի և Ա ն ա ն ո ւ ն, էջ 345–346:*

[41] *Նույն տեղում, էջ 347:*

[42] *Նույն տեղում, էջ 343:*

[43] *Ն ե ր ս ե ս Շ ն ո ր հ ա լ ի. Թուղթ ընդհանրական, էջ 53:*

[44] *Նույն տեղում, էջ 60: Շնորհալին գրում է, որ «տոթագին քարանձավ» Հռոմկլայում իրենք փակված են՝ «կամավորապես իբրև բանտում ու կապանքների մեջ»՝ կտրված հարազատ ժողովրդից (նույն տեղում, էջ 62):*

մի: Նաև ոչ անդաստան հողոյ, զի վաստակօք և աշխատութեամբ զպէտս մեր լնուաք, և ոչ օգնութիւն ուստեք…»[45],– գրում է Շնորհալին:

Հասկանալի է, Հռոմկլայի աթոռն ի վիճակի չէր անմիջաբար ազդել Աղթամարի հայրապետի և նրա հոգևոր իրավասությանը ենթակա ժողովրդի վրա, որն ապավինում էր Աղթամարի աթոռին, նրա հետ էր կապում նաև իր քաղաքական հույսերը, ակնկալիքները: Դա էականորեն նպաստեց Աղթամարի կաթողիկոսության գոյատևմանը: Այդուամենայնիվ, հետագայում Գրիգոր Տաթևացին մեծագույն մեղանչում է համարում Աղթամարի հայրապետների անջատամետ դիրքորոշումը[46], որին հավատարիմ մնաց Դավիթ կաթողիկոսը մինչև իր երկարատև գահակալման վերջը: 1161 թ. նա դեռևս հիշվում է որպես Աղթամարի կաթողիկոս: Նույն թվականին Վանի մոտակա Ս. Խաչ վանքում ընդօրինակված Ավետարանի հիշատակագիրը նշում է, որ վանքի եպիսկոպոս Վահանը ձեռագիրն ստացել է «ի տէր Ստեփանոսէ պրտուկուրապաղատին, եւ ե(ղ(բաւր տեառն Դաւթի կաթողիկոսին[47]«: Այս Ստեփանոսը մոտ 1161 թ. հաջորդեց եղբորը՝ Դավիթ կաթողիկոսին: Հարկ է նշել, որ թե՛ Դավիթ Արծրունու և թե՛ նրան հաջորդած հայրապետների գահակալության ընթացքում Աղթամարի աթոռը հավատարիմ մնաց հայադավան ուղղափառությանը: Նրա հովանու ներքո Վանա լճի շրջակայքի հայ ժողովուրդը պահպանեց հայրենի հավատն ու սրբությունները, հոգևոր ժառանգությունը, կառչած մնաց նախնյաց ավանդներին: Այլահավատ ցեղերի բռնացումները, քաղաքական ալեբախումները «ոչ կարացին խախտել զմեծ վէմն հաւատոյ»[48], – հաղորդում է Թովմա Արծրունու և նրա շարունակողի երկերին կցված հիշատակարանի գրիչը: Աղթամարի աթոռի հավատարմությունը Հայոց նախնավանդ հավատքին էականորեն պայմանավորված էր նաև Դավիթ կաթողիկոսի եղբոր՝ Ստեփանոսի դավանական դիրքորոշմամբ: Վերջինս եղավ «հաստատութիւն հաւատոց և պսակ պարծանաց սուրբ եկեղեցւոյ և մայր ամենայն աստուածապաշտութեանց…»[49]:

Աղթամարի աթոռը Վանա լճի շրջակայքի հայության նկատմամբ հովվապետական իրավազորությունը կարողացավ պահպանել նաև իր դավանական անաղարտությամբ: Բացի այդ, Աղթամարի հայրապետներն ի տարբերություն Հռոմկլայում մեկուսացված հոգևոր հայրերի, շփվում էին հարազատ հոտի հետ՝ լինելով «ի մէջ ժողովրդեանն որպէս մի ի հեզոց»[50]:

---

[45] *Նույն տեղում, էջ 60:*
[46] *ՄՄ, ձեռ. № 4669, թ. 190աբ:*
[47] *Հայերեն ձեռագրերի հիշատակարանները, Ե-ԺԲ դարեր, էջ 183:*
[48] *Թ ո վ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի և Ա ն ա ն ո ւ ն, էջ 346:*
[49] *Նույն տեղում, էջ 348:*
[50] *Նույն տեղում:*

Դրանում էր Աղթամարի կաթողիկոսության գոյության ու հարատևման նշանակությունը:

ОБ ОСНОВАНИИ АХТАМАРСКОГО КАТОЛИКОСАТА

ВРЕЖ ВАРДАНЯН

Резюме

В Васпуракане испокон веков существовала армянская епархиальная церковь. После падения Васпураканского царства Арцрунидов (1021 г.) и присоединения его провинции к Византийской империи, местная армянская церковь сохранила свою самостоятельность, вероисповедание и иерархию. Этому способствовало то обстоятельство, что в районе Ванского озера сохранилось армянское княжество во главе с отпрысками рода Арцруни, которые имели воинские соединения и защитили границы региона. В 1113 г. ахтамарский епископ Давид Арцруни провозгласил себя католикосом, ссылаясь на молодость католикоса всех армян Григора Пахлавуни. В церковном соборе у подножья горы Аманос католикосат Ахтамара подвергся резкой критике и анафеме со стороны армянского духовенства. Хотя Давид Ахтамарский провозгласил себя католикосом всех армян, его власть ограничилась прибрежными районами Ванского озера. В создавшихся условиях, когда резиденция католикоса всех армян находилась вне Армении, Ахтамарский престол самостоятельно распоряжался церковными делами, входившими в его компетенцию. Важным фактором функционирования Ахтамарского католикосата являлось то обстоятельство, что он находился на родной земле и постоянно общался с народом, сохранил свое вероисповедание и духовные ценности народа.